ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
с. ЕРВАНДАШАТ

գ.Երվանդաշատ

N 37

<< 17 >> << 08 >> 2016թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու N 04 հերթական նիստի 1, 2, 3 որոշումները, կայացած 12.08.2016 թվականին:

Առդիր 4 թերթ:

ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ / Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ. Ս. Հարությունյան 093 16 43 42

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.89/9230-16
18 08 2016թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Երվանդաշատ համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 12-ին կայացած հերթական նիստի.

Մասնակցությամբ

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Գագիկ Աթոյան
2. Զավեն Գևորգյան
3. Արմեն Ղազարյան
4. Հովհաննես Շահինյան
5. Յուրիկ Ափրիկյան

Համայնքի ղեկավար՝ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հրավիրվածներ՝
Աշխատակազմի գլխավոր մասնագետ Շ. Մուրադյան
Առաջատար մասնագետ Հ. Ղազարյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Երվանդաշատի ավագանու N 04 նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ.Ավետիսյան/

2.Ուղղեծ Արմավիրի մարզպետին:

/Զեկուցող՝ Հ.Ավետիսյան/

3.Վարչական հսկողության ստուգումների արդյունքում թերությունների քննարկման մասին:

/Զեկուցող՝ Հ.Ավետիսյան/

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 1-ին

Հարցի կապակցությամբ համայնքի ղեկավար Հովնան Ավետիսյանը նշեց, որ «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, նիստի օրակարգը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ: Նա միաժամանակ նշեց, որ նույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը տրամադրվել են համայնքի ավագանու անդամներին:
Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:
Հարցը դրվեց քվյարկության.
5-կողմ, 0-դեմ, 0-ձեռնպահ արդյունքներով համայնքի ավագանին որոշեց՝
1.Հաստատել երվանդաշատ համայնքի ավագանու N4 նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 2-րդ

Հարցի կապակցությամբ համայնքի ղեկավար Հովնան Ավետիսյանը նշեց՝

ՈՐՈՇԵՑ

«12» օգոստոսի 2016 թվական N2-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՈՒՂՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանին հղել ուղղերձ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումը ուժի մեջ համարել ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Գագիկ Աբոյան			
2. Զավեն Գևորգյան			
3. Արմեն Ղազարյան			
4. Հովհաննես Շահինյան			
5. Յուրիկ Ափրիկյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի
Երվանդաշատ համայնքի ավագանու
2016թ. օգոստոսի 12-ի N 04 նիստի N 2 որոշման

ՈՒՂԵՐՁ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանին հարկ է համարում հիշեցման կարգով մեկ անգամ ևս անդրադառնալ սույն թվականի մարտի 17-ից 21-ը ընկած շաբաթակիրակվա ծում տեղի ունեցած ցրտահարության խնդրին:

Պարոն մարզպետ, Երվանդաշատցիների հիմնական եկամտի աղբյուրը հանդիսանում է ծիրանի բերքը, որից զրկվեցինք 95%-ով:

Երվանդաշատ համայնքի բնակիչները հայտնվեցին անելանելի վիճակում, հատկապես վարկերի պատճառով:

Երվանդաշատ համայնքի ավագանին ապավինելով Ձեր պետական մտածելակերպին, հայցում է Ձեր միջնորդությունը, կարեկից լինելու վերոհիշյալ խնդրին, և բնակիչներին օգնելու որևէ կերպ:

Դրական պատասխանի ակնկալիքի սպասող Երվանդաշատի ավագանի:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Գագիկ Աթոյան
2. Զավեն Գևորգյան
3. Արմեն Ղազարյան
4. Հովհաննես Շահինյան
5. Յուրիկ Ավդիկյան

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 3-ՐԴ

Հարցի կապակցությամբ համայնքի ղեկավար Հովնան Ավետիսյանը նշեց՝

ՈՐՈՇԵՑ

«12» օգոստոսի 2016 թվական N3-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 22.06.2016 թիվ 01/02.1/2054-16 շրջաբերականը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վարչական հսկողության գործընթացի շրջանակների ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների շտկման համար հանձնարարել՝ Երվանդաշատի գյուղապետարանի աշխատակիցներին (աշխատակազմի քարտուղար Սանասար Հարությունյանին և գլխավոր մասնագետ Շահեն Մուրադյանին) սեղմ ժամկետում շտկել հայտնաբերված թերությունները և որպես ի գիտություն այսուհետ նմանատիպ բացթողումներ չկրկնել:

2. Սույն որոշումը ուժի մեջ համարել ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Գագիկ Աթոյան			
2. Զավեն Գևորգյան			
3. Արմեն Ղազարյան			
4. Հովհաննես Շահինյան			
5. Յուրիկ Ափռինյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ